վածքային հարցեր և այլն), քանզի գիտակցել է, որ ***գրական***-ը դեռևս ***գեղարվեստական*** չէ, թեպետ ***գեղարվեստական***-ը պարտադիր նաև ***գրական*** է: Դրա լավագույն օրինակը հայ պատմագրության մեջ Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն» աշխատությունն է, որի գեղարվեստական արժեքի մասին խոսելը գիտական լրջության տեսանկյունից հեշտ խնդիր չէ, մանավանդ որ՝ Փարպեցին «արտահայտում է [5-րդ] դարավերջի պատմագրության բնորոշ ձգտումը դեպի զուտ գիտական, այսինքն գեղարվեստականությունից հեռացող և ճշգրտության հասնող պատումը»[8], սակայն հանգիստ կարելի է քննաբանել այդ պատմագրքի գրական արժեքի հարցը, հատկապես ժանրային ու կառուցաբանական մակարդակներում: Եվ բոլորովին պատահական չէ, որ Մայիս Ավդալբեգյանն իր վերը հիշատակված մենագրության տարաբնույթ խնդրադրություններում ընդհանրապես չի ներառել Ղազար Փարպեցու աշխատությունը:

Թեպետ «...V դարում դասականացված հայ պատմագրությունը հասել էր մի այնպիսի կատարելության, որ այլևս կարիք չուներ ժանրային նորամուծությունների» և «Ժանրի կառուցվածքային տարողությունները միանգամայն հնարավորություն էին տալիս ներառելու նորացող, սակայն ճակատագրով ամենևին չփոխվող ժամանակների պատմության տրամադրությունների տարերքը»[9], այդուհանդերձ, ուշ միջնադարում հայ պատմագրությունը որոշակիորեն փոխել էր իր ժանրային դիմագիծը, և գրական, գեղարվեստական ու պատմագիտական առանձնահատկությունները ժանրի երևումներում ներկայանում էին այլ հարաբերակցությամբ ու համադրությամբ: Մասնավորապես՝ 12-րդ դարից սկսած, ինչպես նկատում է Մանուկ Աբեղյանը՝ «արվեստը պակասում է մեր

---

8 ***Ժենյա Քալանթարյան***, Հայ գրականագիտության պատմություն (5–19-րդ դարեր), Երևան, 1986, էջ 25:

9 ***Զավեն Ավետիսյան,*** Խորենացին մշակույթի գիտակցության մեջ, Երևան, 2001, էջ 16: